

47. Տէր Յովսէկի քահանայ. — Տէր Յովսէկի ձեռնադրուած պէտք է ըլլայ 1650ական թուականներուն։ Նորընծայ յութեանը առաջին անգամ ըլլալով կը յիշուի նոյն թուականներուն։ 1625ին Սամոսի որդի Ականտար չէլէպի Ա. Քառասունը եկեղեցւոյ կը նուիրէ Թորոս Տարօնցիի զրած ու ծաղկած մեր թիւ 110 Մանրուամունքը։ Տէր Յովսէկի գնահատելով սոյն արժէցաւոր և հնօրեայ ընտիր ձեռագիրը, կը նորոգէ զայն և այնպէս ալ կը մնայ ցարդ։ 1661ին երկրորդ անգամ ըլլալով կը յիշուի Հալէպցի Տէր Յովսէկի քահանայ, որուն խնդրանքով իր եղայրակից Տէր Մկրտիչ քահանայ կը զրէ մեր Զեռազրաց Մատենադարանի 18 թիւ թղթեայ երկսիւն Աւետարանը, բաղկացած 322 թերթերէ, երկսիւն, կաշեկազմ և արծաթապատ։ Սոյն աւետարանը Տէր Յովսէկի մահէն վերջ յիշատակ կը մնայ Ա. Քառասոնից եկեղեցին։ Տէր Յովսէկի որդին է Նամէի և Սթլըուլի. երեցկինն է Սթըլպէյթ։ Ունի եղայր մը՝ լուսարար տիրացու Եաղուաշայ։ Ունի երկու զաւակներ, տիրացու Պօղոս և տիրացու Պետրոս, երկուքն ալ Աստուծոյ տան սպասաւորութեան մէջ։

այս Տէր Յովսէկի կոչած են մեծ, աւագերէցի իմաստով, և իսկապէս մեծ իր յիշատակի կողողներով, որոնք հակառակ շուրջ երեք դարեր անցած ըլլալուն, կը մնան Ա. Քառասոնից մէջ։

Բայ Երուսաղեմայ Փատրիարք Մինաս Ամմեցիի օրագրութեան՝ Տէր Յովսէկի քահանայ վախճանած է 1695 Յուլիս 15ին։ Իր գամբարանը անյայտէ, մինչդեռ պէտք էր ինսամով պահուած ըլլալ ան։ Իր մահէն եօթը տարի վերջն է որ մեր թիւ 18 աւետարանը, Տէր Մկրտիչ քահանայէ զրուած, յիշատակ կը դրուի Ա. Քառասոնից մէջ։

48. Տէր Յովսասափ քահանայ. — Ասիկա առաջին անգամ յիշուած կը գտնենք մեր Զեռազրաց Մատենադարանի թիւ 106 Մաշտոցի վերջի մագաղաթեայ պահպանակի երրորդ թերթին ճիշտ մէջտեղը, իր կողմէ զրուած այսպէս. «Տէր Պետրոսին ես Յովսասափ երեցս գնեցի»։ Տէր Յովսասափ Հալէպցի՝ երկրորդ անգամ ըլլալով կը յիշուի 1661ին, երբ ի Հալէպ կը զրէ Ասդմասարան մը, 154 թուղթերով։ Միասիւն և փայտեայ կաշեպատ, որ այժմ 159 թիւով կը մնայ Վիեննայի Միհիթարեանց Մատենադարանը (Տաշեան Յուղակ

Տէր Յովսէփ քահանայ իր սիրելի եղայրակից Տէր Մկրտիչ նկարիչ և զրիչ քահանային նկարել կու տայ Ա. Քառասունք եկեղեցւոյ հնագոյն նկարներէն Ո. Մինասի համբաւաւոր նկարը, որ մասնաւոր պաշտամունքի առարկայ եղած է միշտ և՝ ազգայիններէ և՝ օտարներէ; Նկարս կը կրէ հետեւեալ յիշատակարանը. — «Թիշտակ է Տէր Յովսէփին և իր կողակցուն Սթըլպէյթին և հօրն Նամէին և որդույն Պետրոսին և Պողոսին»: Տէր Յովսէփ բնիկ թերիացի, բանիմաց, զրասէր ու արուեստասէր հոգեւորական է: Իր աղօթած Ա. Քառասունից եկեղեցւոյն բարեզարդութեանը նախանձախնդիր, զայն կը զարդարէ իր նուէր աւետարաններով և նկարներով, ովք զիտէ թէ ուրիշներ ալ նոտիրուած ու կորսուած չեն: Իրեն ժամանակակից այլ Տէր Յովսէփ մըն ալ ըլլալուն Հալէպի մէջ,

էջ 463-5): Մէր Զեռազրաց Ս ատամաշարանի թիւ 30 թղթեայ Աւետարանին յիշատակազրութիւններէն մէկուն մէջ (տես մեր Ցուցակը Ա. էջ 66թ) կը յիշուի Յովսասի բահանայ մըն ալ, որուն որդին է Տէր Յովհաննէս քահանայ և որ չի կրնար նոյնն եղած ըլլալ այս Տէր Յովասափին հետ, որ ժամանակաւ աւելի վերջը կու գայ:

49. Տէր Մատրենոս բահանայ. — 1668ին Հալէպի մէջ կը վախճանի և Ա. Քառասունից եկեղեցւոյ բակը կը թաղուի բարապանի սենեակի մուտքին՝ Տէր Մատթէոս քահանայ: Ուսա արձանագիրը եր տապանացարին. — « Տապան հանգստեան Տէր Մատթէոս քահանայի. հանգեաւ ի Տէր Ուժիկ ( = 1668): Իր մասին այլուր ու է յիշատակութիւն չունինք. կարելի չէ ըսել թէ պանդուխտ քահանայ մ'է:

(Շարութակելի) ԱՐՏԱԿԱՐԱՐ ԱՐԲԵՊԱ.

(Շաբաթական) ԱՐՏԱԿԱԶՄ ԱՐՔԵՊՈՎ

ԵԶՈՒԱԿԱՆ

## ՆԻՒԹԵՐ ԱՐԵՒՏՍԱՀԱՅ ԱՇԽԱՐՀԱԲԱՐԻ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ ՀԱՄԱՐ

Աշխարհաբարի պատմութիւնը ամբողջացնելու համար գեռ շատ ուսումնասիւրելիք կէտեր կան։ Եթէ ուշի ուշով ցննենք խնդիրը՝ կը տեսնենք որ նախ և առաջ Միսիթարեան Հայրերն են «Պօլսէվար» հայերէն աշխարհաբարը կանոնաւորելու ջանացողները, յաջորդաբար զտելով մաքրելով իրենց գրութիւնները «ըսելնինի», «տեսնելնինի» և այլնի նման ասութիւններէ։ Ասկէ զատ՝ օտար բառերու ցովերը սկսած են բուն հայերէն բացատրութիւններն աւելցնել փակագիծներու մէջ։

Հետաքրքիր ուսումնասիրողի մը պարտը  
կ'իյնայ հետեւաբար, Մխիթարեան հին  
տպագրութիւնները աչքէ անցնել և մինչեւ  
այսօր Մխիթարեան մամուլի արտադրու-  
թիւններու հետ ուշի ուշով բաղդատել զա-  
նոնք՝ աշբերութիւնները երեւան բերելու  
համար։ Այն ատեն պիտի տեսնուի թէ ինչ  
մեծ ջանք և աշխատութիւն թափուած է,  
այսօրուան մաքուր աշխարհաբարը, այս-  
պէս բաելով, կերտելու համար։

Միսիթարի աշակերտները, բացատրութիւններու ասացուածքներու մասին իսթանպուլի թուրքերէնը (Տաճկէվարը) իւրենց օրինակ առած են։ Ուրիշ կերպ ալ չէր ըլլար, որովհետեւ արևմտահայ աշխարհաբարը ամէնէն շատ իսթանպուլի մէջ կը խօսուէր թէեւ շատ աղաւաղ և շատ անկատար կերպով։ Հասարակ ժողովուրդը որ բերականական կանոններու, բառագիտութեան զբէթէ բնաւ ծանօթու-

թիւն չունէր, հետեւեալ կերպով կ'արտայայտուէր. զոր օրինակ. «Սիլիկ պէշլիկը սա եէնիչքիին եռթտուրմիշ ըրի», «Ես բուկին հագէտ մութլախա պիտի զամ», «Քու թօփըդ քանի՞ փաթլամիշ կ'ըլլայ կոր», և այլն:

Աշխարհաբար բացատրութիւններու կարգին՝ կրօնական և ուրիշ մատեաններէ օրինակներ առաջ կը բերուէին, զոր օրինակ. «Կալ զիս հրաժարեալ», «Կորուսեալ էր և զտաւ», «Թող զկանայս և զմանկտի»ի պէս։ Այս ձեւը հայ կղերը ևս պածածէն առանձիւած։

իսթանպուլ ապրած բայց ուրիշ տեղեր  
ծնած հայ գրողներ թէեւ Մխիթարեան-  
ներու հետ զուգընթացարար աշխարհաբար  
գրած են հետեւողաբար, սակայն իրենց  
գրուածքներուն մէջ սպրդել տուած են  
կարգ մը ասացուածքներ, բառեր և այլն,  
որոնք իրենց ծննդավայրին մէջ զործա-  
ծական եղած են, իսթանպուլի «Պօլաէվար»  
աշխարհաբարին հետ բնաւ առնչութիւն մը  
չունին:

Միտքերնիս ընդարձակ ուսումնասիրութիւն մը զբել չէ, այլ կ'ուզենք շեշտել սա պարագան թէ արեւմտահայ աշխարհաբարեխն պատմութիւնը կ'արժէ որ առանձինն ըննուի և նորանոր պրատումներու ենթարկուի: Այս կերպով է որ երեւան պիտի բերուի աշխատութեան այն ամենալայն բաժինը՝ զոր բերած են անմահն Միթարի աշակերտները՝ հիմը դնելու մանաւանդ՝ մեր

արդի աշխարհաբարին և կատարելագործ  
ծելու համար զայն աստիճանաբար:

\* \*

Աշխարհաբար հայերէն հին զբողներէն  
մին է նաեւ Տիրացու Միքայէլ, որ բնիկ  
պասրացի էր: «Ծնած է 1760ին ժամա-  
«նակները և իսթանապու գաղթելով իրեն  
«բնակավայր կ'ընտրէ «Պալաթ» ու կը  
«հաստատուի թաղին դուրս «Տէյլրմէն»  
«ճի» կամ լաւ եւս հացագործ Համբար-  
«ձումին փուռն և ջաղացը, ուր անցուցած  
«է պանդտութեան զբեթէ բոլոր տա-  
«րիներն:

«Սակայն Տիրացու Միքայէլին մշտըն-  
«ջենական կոյանը՝ ջաղացը չէր, զբեթէ  
«հանապազօրեայ ժամադրավայրն էր Ս.  
«Հրեշտակապետ Եկեղեցւոյ բակը, ուր կը  
«զիմէր ընդ այգն այգուն և երեկոյին ի  
«ձայն կոչնակի, իսկ ցերեկները ընդհան-  
«րապէս ճաշի կը հրաւիրուէր լուսահոգի  
«Հիւնցեարպէյէնտեան խանէտան քահա-  
«նայէն, որուն սիրականն էր: Հին Պա-  
«ւաթցիներէն ո՛վ չի գիտեր, ո՛վ չի սիրեր  
«Տիրացու Միքայէլը, որ իւր ճաղատ  
«զլուխը «չալմա» կը կապէր. հագուստին  
«վրայէն երկայն ապա մը կը հագնէր որ  
«բնաւ հիննալիք չ'ունէր և մշտանորոգ  
«գոսթիւմն էր. բայց և այնպէս՝ սոյն ան-  
«պաճոյն հանդերձով իսկ ամենուն հա-  
«մակրանքն և սէրն առ ինքն ձգած էր  
«Տիրացուն:

«Կերած հացին դրամ չէր տար Մի-  
«քայէլ. Համբարձումին փուռէն ձրիա-  
«բար կը տըռուէր իրեն: Բաղդին հենգ-  
«նութեանը մատնուած մարդ մ'էր որ  
«տեսակ մը փիլսոփայութիւն կը ծախէր:  
«Առանց տառասիւլի սքանչելի մար-  
«գրիտի պէս գիր կը զրէր: Օրերիւն մեծ  
«մասը կը զոհէր՝ վարդապետաց համար  
«Քարոզգիրը ընդօրինակելով և վահա-  
«նայից զրերը պատրաստելով:  
«Ոսոնցմէ զատ, տարին երկու հարիւր  
«դուրուշն աւելի զումար մ'ալ բարե-  
«պաշտ անձանց առատաձեռնութիւնէն կը  
«շահէր, ամէն առաւոտ և երեկոյ Պա-

«Լատու Ս. Հրեշտակապետաց եղեղեցւոյ  
«գուով կենալով, առանց ձեռք բանալու:  
«Պալաթու եկեղեցւոյ նորոգութեան  
«տարին, (1835), Տիրացու Միքայէլ 75  
«տարեկան էր: Սոյն եկեղեցւոյ շինու-  
«թեան համար կիր կրած, կռնակովը բար  
«շալկած և զողոշուն ձեռքերով խօրա-  
«սան ծեծածէ (Շար Հայ կենսագրութեանց  
«Պալակ Բ. Աբրահամ Յ. Այլազեան կ.  
«Պոլիս 1893):

Պասրացի Տիրացու Միքայէլին կենսա-  
գրութենէն այսչափ մը ընդօրինակելէ յե-  
տոյ՝ ստորեւ կու տանը իր աշխարհա-  
բար զբած երգիծական ոտանաւորներէն  
նմոյշ մը:

### Հիւրընկալութիւն

1. Ոտանաւորս փոքր մի ջանիւ,  
աշխարհաբար զըրեմ բանիւ:  
Միւրքն պարզ է ոչ խոր, բարակ:  
Կու հասկնան առ հասարակ:
2. Ազնիւ եղբարք ականշ դըրէք.  
Բանս որ կարդաք մի մեղադրէք:  
Գիտեմ ըսէք պիտոր պօշ է:  
Լաքին տեղանեղ ունի քէօշէ:
3. Գանգատ ունիմ երեք բանէ.  
տուն տուն զըրեմ՝ խանէ խանէ:  
Գլխուս եկած փորձանքն խազէն<sup>1</sup>:  
հնար չթողուց զըրեմ թազէն:
4. Նախ բիրէն պատմեմ պիտի.  
Երկրորդն ապա թախթապիթին,  
Եւ երկրորդն՝ յայտնի նաշար<sup>2</sup>  
Սիւրի սինէկըն ամենաչար:
5. Որ մէկ գիշեր մինչեւ ի լոյս,  
թէ ի՞նչ բերին իմին զըլխուս:  
Ցատուկ յատուկ ընեմ թարիփ,  
լըսողին չ'ըսէն մեզի հէրիփ:
6. Միայն խնդրեմ ի ձէնշ ներում.  
շնորհել անպէտ գրութեանս մերում:  
Երբեմն երբեմն զործքիս համար,  
մըտնէ խորհուրդ մըտքիս տամար<sup>3</sup>:
7. Ի Պալաթուն առ իւսկիւտար,  
եկեալ եմ աստ առնուլ դադար:  
Ասոր և անոր զըրեմ բաներ:  
Փեսան պօշ է առանց աներ:

8. Բարեկամմէրս Աստուած պահէ,  
ազատ մեղաց, կերպ կերպ ցաւէ:  
Են բարեսիրտ և հիւրասէր.  
որոնց մէկն ինձ շատ ցոյց սէր:
9. Տուն հրաւիրեց մեղաւորիս,  
հոգուով մարմնով մեղաւորիս.  
Որ գնացի և պատուեցայ.  
կերի, արբի և գոնացայ:
10. Քնանալ պէտք էր եղեւ գիշեր.  
ըսի, Աստուած մեղաք մի՛ յիշեր:  
Մըտածեցի ես ինքզիրեն.  
որ ըը նեղէր զիս չար բիրէն:
11. Իւլէ այն չար թախթապիթին,  
Որ հոտն զարշ է մարդուս քընթին:  
Սիւրիսինէկն բիս է շատուց.  
ձեւ լէյլէկի երկայն կըտուց:
12. Ասոնցմէ իբր լիցիմ պատ.  
ըրին ինծի իբրամ իզատ: (հզզէթ)<sup>4</sup>:  
Եաթախ բացին հոն բարձր սուփան<sup>5</sup>.  
երբ պառկեցայ եղեւ թուփան<sup>6</sup>.
13. Մէյ մ'ալ հայիմ մարմինս բոլոր,  
պաշալյց կեռալ, եղէ մոլոր:  
Մէր թշնամին չարըն չէյթան.  
ասոնց համար բացաւ մէյտան:
14. Ասուֆան թէմիզ՝ և իւր թաւան<sup>7</sup>,  
իմ քէօր բաղդէս կըտրաւ հաւան<sup>8</sup>:  
թախթապիթիք, բիրէք յարեան.  
իիստ ծարաւիք իմոյ արեան:
15. Սիւրիսինէկն ասոնց ընկեր.  
Խօրթումը սըրած դէպ ինձ տրնկեր:  
Ես պառկած էի դէպի հարաւ.  
իածնէին իմ ամէն թարափ:
16. Զորս կողմը ինձ պըտըտուցին.  
հիւսիս կողմնալ ինձ ցըցուցին:  
Ես կերած էի բրինձ, լաբան.  
Ամէն դիաց վըրաս թափան:
17. Ես չը կերած քիրազ, չիլէկ,  
արունեցին ձեռքիս պիլէկ:  
Մէկն ալ իածնէ թեւիս տամար.  
պէռպէտ եղեւ ինծի համար:
18. Ձեռքս առի հին էլփազէն.  
ըսի Աստուած տայ ձեր խազէն:  
Որ ձեռքս պահա եռք կը բիրէ.  
գըժուպի հուրըն զձեզ այրէ:
19. Երեք ամիս բոլոր զարուն,  
դուք կը խըմէք մերին արուն:  
Շատ կու նեղէք զմեզ ամառն.  
սադայէլ ձեզ զարնէ շամառն<sup>9</sup>:
20. Յունիս, յուլիս և օգոստոս.  
ձեզ անիծէ Սուրբըն Յուստոս:  
Աջ ականջիս զըրսի զըռնէն,  
սիւրիսինէկն չալէր զուռնէն.
21. Տըզ, վըզ, տըզ վըզ, հանէր ձայնիկ.  
թիւրլիւ, թիւրլիւ որպէս պօյնիկ<sup>10</sup>.  
Ո՛վ պիզէ բիրէ, գոյնըդ սեւ բէնկ,  
ո՛չ չայն գիտես և ոչ ֆրէնկ:
22. Թէ մեծամեծք և թէ պլզոփիկ.  
խածնես, զամէնքն, չար լկզտիկ:  
Պասմա ըրիր հազար շապիկն:  
քեզ անիծնես զայլ և կապիկն:
23. Մէծ կնիկ ոմն, թօփալ պառաւ,  
թէպէտ ձերին ձեռքէ մեռաւ.  
Լաքին գիշերն իր ոմն (էօն)<sup>11</sup> առեց.  
մօմին կնատն շուտով վառեց:
24. Ի միասին հետ իւր թոռին.  
տուաւ կըրակն ձեր գէշ ուռին:  
Դուք անողորմ քան զբարբարոս.  
իջնէք զըժողքն և տարտարոս
25. Գամ առ քեզի սիւրիսինէկ.  
տարմով շրջիս և ոչ մինեկ:  
Ներքեւող վըրան բոլոր աշխուն.  
որին խածնես, կընես շաշխուն<sup>12</sup>.
26. Վըժեղ գու վատ բազմոտանի.  
զըլխուտ շալման է մօտանի  
Պույնուզ ունիս երկու թարափ.  
մէկն հիւսիս, մէկալն հարաւ:
27. Չայնէր հանես ինչպէս թուռնան<sup>13</sup>.  
խածն ատենդ չալիս զուռնան:  
Որ ձայնդ հասաւ, թէվրիզ, կէննէ.  
ըրին իրենց զիս էլլէննէ:
28. Ես պոռայի աման, աման.  
ան կու չալէր սանթուր, քէման:  
Բիրէին մէկն ականջս մտաւ.  
դուրս փախչելու տեղ չիզըտաւ:
29. Ջարմացայ ես այս ի՞նչ բան էր.  
թըրթըր, թըրթըր ձայն կու հանէր:  
Շապիկս ըրիր կարմիր պախամ.  
քեզ նզովէ ըլփթին խախամ:

30. Գըլիսուս օրթան չխնդիր տազ էր.  
ելաւ այնտեղ, ուրախ վազէր:  
Խածնէր տեղ տեղ անդէն թաքչէր.  
Երբ փնտուի փախչէր:
31. Անգուն ելեալ ժամ գընացի.  
մեղայ ըսի մեղքըս լացի:  
Ասուած պահէ անդէն լուէն.  
ըզմեզ զամէնքն ի չար դիւէն:

Ինչէս գրութեան ձեւէն կը տեսնուի,  
այս ոտանաւորը իսթանպուլի աշխարհա-  
րարին ամբողջապէս չի նմանիր. «կը» ին  
տեղ՝ «կու», «թափեցան» ի տեղ՝ «թա-  
փան», «կտրեցաւ» ի տեղ՝ «կտրաւ» կը  
գործածէ: «ինքնիրեն» չի գործածեր՝ այլ  
«ինքղիրեն», «առաւ» ին տեղ ալ՝ «առեց»  
եւայլն: Ասոր հակառակ ունի կարգ մը ժու-  
ղովրդական ուրիշ բառեր որոնք այժմ չեն  
գործածուիր. զոր օրինակ. «լկոտիկ»,  
«մօտանի», «կճատ», «աշխուն»:

Տիրացու Միքայէլ մեռած է 1847ի ա-  
տենները:

\* \*

Տիրացու Միքայէլէ զատ, շատեր «Պօլ-  
սէվար» աշխարհաբարով գրութիւններ  
ձգած են: Ասոնցմէ ոմանց անունները ձա-  
նօթ են, ոմանցն ալ՝ ոչ:

Ոնձանօթներէն մէկուն մի ոտանաւոր-  
որ գրուած է իսթանպուլի մէջ 1841ին-  
հոս կը զետեղներ ատաղձ հայթայթելու-  
համար նորանոր պրատումներու:

### Ա. - Տիրացուին

Անկեալ. օր տեսած եւ աղքատացած մարդ

1. Գիտէք դուք ինծի. ի՞նչ էի առաջ:  
Խօսքս չ'ը զալէր ամէնէն առաջ:  
Երբ ձախորդութիւն եկաւ ինձ յանկարծ.  
Գընա կորսուէ, ան ճանըմ, ըսին բացէ բաց:
2. Երբ ինծի հետ էր արծաթ և ոսկին,  
Սողոմոն էի ուր որ կանչէին:  
Երբ զնաց իզմէն, գիտէք ի՞նչ եղայ.  
Փախչող խենթերէն՝ թիմարխանային<sup>14</sup>:
3. Երբ նուֆուսի տէր, հոն՝ ամէնուն տէր.  
Երբ խայմին<sup>15</sup> եղայ, ծառայս ինծի տէր,

վախ այս աշխարհին, խաբեբայ փառքին  
քի նասուլ ըրաւ զիս թէքէր<sup>16</sup>, մէքէր:

4. Շատ սատրազամի սարրափն էի ես  
կրնամ ըսել, մէկը չ'եղաւ ինծի պէս:  
Մէկը ազլ<sup>17</sup> ըլլար, նոր եկողն իմս էր.  
վէ այս խօսքերուս դու ալ վկայ ես:

5. Երբ ժամ կերթայի, վեր կը նստէի.  
եկաւ կըսէին Ամիրան տէյի:  
Լաքին կէնէ հոն քիչ բանի համար.  
«Շունու ալ» տէյի տուին զաղիթի:

6. Հապա՛ բերաննիս ընենք քաղցրախօս,  
մերը չի զիտնանք, մնան պիտի հոս:  
Ունիս նէ տախի, զիտցիր քի չ'ունիս.  
վէ ասանկ կըսէ քեզ «Աղայ Պօղոս»<sup>18</sup>:

7. Հալէա ինծի պէս մէկ քանին տահա,  
հալէրնին մազտուր<sup>19</sup> երեսի վրայ:  
Ասկէ նայէ որ գէ՛շ ըսել չուսու.  
Այսօր անոր է վաղը քեզ կըլլայ:

### Բ.

Հետեւեալ ոտանաւոր խրատականը կ'ըն-  
դորինակենք կարապետ վարժապետ Ատե-  
փանեանի ձեռագիր մէկ տետրակէն, որ  
կարգ մը հետաքրքրական գրութիւններ կը  
պարունակէ: Կարապետ վարժապետ հըռ-  
չակաւոր նասիպ վարժապետ Թամավիրճի-  
եանին աշակերտն էր:

1. Ա՛ռ ասկից ետեւ այլ օրինակ մի.  
սըրա զիր զիրէլ ջանացես բարի:  
Այլ եթէ խառնակ վէ եախօտ բնթի  
անա զրիդ մէջ չը տեսնամ պիտի:
2. Ճահան<sup>20</sup> ըրէ խայէթ, դարձուր աղէկի.  
այն քու ուրդունուզ<sup>21</sup> գիրերդ պազի:  
Ո՛չ այնչափ խոշոր, ոչ ճըզըզ լինի.  
այլ մէկ պօյ տիւզիւն, գեղեցիկ շարփի:
3. Նաեւ հասու բարակ միում յերեսի.  
խառմախառըշի<sup>22</sup> չը զըրէս պիտի:  
Մինչեւ իրինկուն ձեռքէդ վար չընկնի.  
Տես որ չորս երես պակաս չը լինի:
4. Լաքին խրատիս ականջ չը զըրփի.  
քու քէյփիդ<sup>23</sup> կէօրէ գործըդ անհամի,  
ծեծին փէք լաւը հազըր է քեզի.  
իշթէ զուրցէցի՝ քէյփինէ դայրի:

### Գ. - ՆԱՄԱԿԻ ՕՐԻՆԱԿ ՄԸ

Գերապանծ մտերիմի իմ ընտրեալ

Շատ ջանացի զալ հրամանուցնուդ տեսու-  
թեան՝ լաքին մէկ թիւրլիւ խօլայը չը գըտայ,  
չիւն մասլահաթնուս իխթիզան<sup>25</sup> ասլա միւսա-  
հատէ չ'ունի<sup>26</sup>: Այս վէջնով թիմա կընեմ, որ-  
քան զահմէթ իսէ՝ երկու օրիս մէջը, մեզ տես-  
նալով միւրվէթ ընէք<sup>27</sup>. զէրէ հարկաւոր խօսե-  
լիք ունիմ: Ո՛ղջ ւեր Տէրամբ ի սէր:

ԿԱՐԱՊԵՏ ԸՆՏԵՓԱՆԵԱՆ

### 1. Գ. - ՀԻՆ ՊՈԼՍԵՑԻՈԾ

ԸՆԼԿԵՐԱԿՈՎՄԵՆԱՅ պայմանագիրի եւ սէ-  
ՆէՄՆՄԵՐՈՒ (պարտամուրիակներու) օրինակ-  
ներ:

#### Պատճառ գրոյս այս է

Որ ես Սիմաւոնի որդի խազէզ Մելիտոնս, Տի-  
րացու Աբրահամին հետ օրթախ եղայ: հազար  
(1000) դր. ես զրի սէրմայէ: Հազար երեք հա-  
րիւր դր. (1300) Տիրացու Աբրահամն. որ խա-  
նութիս կէտիկն ալ իմ է: Այս խավլովը որ եթէ  
հասնիմք աստուծով ի տարեգլուխն և հիսապ  
ընենք, աստուած ինչ տըված որ լինի, կէսն իմ  
լինի՝ կէսն իր. ու թէ՛ տատուած չ'ընէ, զարար  
ալ ընենքնէ, նոյնպէս կէսն ես քաշեմ, կէսն՝ նա-  
Ռ թէ՛ ով գիտէ՛ զատվելու որ լինիմք; թէ՛ ըոզակ,  
թէ՛ ըստակ թէ՛ պարտք, թէ՛ վէրէսիյէ, երկութիս  
հաւասար լինի. և այս պայմանիս վերայ տըվի  
զայս իմ ձեռագիրս ի ձեռս նորա, որ ի դիւլոջ  
ժամու հաստատեցէ զայամանս և բաւէ:

Գրեցաւ օրթախութեան թէմէսիւկս ի թուին  
հայոց ումա (1752) մայիսի Տասն:

### 2. (ԱՄԴՈՐԾԱԳԻՐ) Պատճառ գրոյս այս է

Որ ես Գրիգորի որդի ոսկերիչ մահտեսի Պե-  
տրոսս որ սուէր էի ոսկերիչ մահտեսի Յունանի  
հինգ հարիւր (500) դր. փոխ 201 օր վատէով,  
առի ի նմանէ զիմ ստակս պի զուսուր և վճար-  
վեցայ և զիմէթ իպրա ըրի որ այլ մէկ ստակ  
մէկ փող առնեկիք չունիմ ի նմա, և ետու զայս  
իմ ձեռագիրս նմա ի թուին հայոց ումբ, (1753)  
Նոյեմբերի ութն. որ ի պիտոյ ժամանակի վկա-  
յեցէ զայս և բաւէ:

### 3. 4000 ԱՄԱԿ չորս հզը. դրուշ է:

Պատճառ գրոյս իմոյ այս է՝ որ ես ըստորա-  
գրեալս պարտիմ ի մեծ նոր խանն եղեալ յար-  
ելի Սինեօր Ալէքսիյին պախըրի զին օլարախ

մինակ չորս հզը. դր. որոյ կէսն է երկու հզը.  
դր: Աստուծով որ ժամանակ ուզէնէ առանց  
այլեւայլ բանից տամ և զայս տուեալ ձեռագիր  
իմ հետո առնում բաւէ է:

Պէտքէթ Տէթիւ

սահմագի բուիմուն Սեպուհ  
(1830ական թուականներուն զրուած պարտամուրիակ)

### 4. 500 ԱՄԱԿ հինգ նարիւր դրուշ է.

Զօրութիւն գրոյս իմոյ այս է որ ես ստորա-  
գրեալս՝ պարտիմ ի նոր խանն եղեալ սարրաֆ  
Գրիգոր Աբային մինակ հինգ հարիւր զը. որոյ կէսն  
է երկու հարիւր յիսուն զը: Աստուծով իննսուն  
և մէկ օր վատէյին առանց այլ և այլ բանից  
տամ և զայս տուեալ ձեռագիրս իմ յետո առնում.  
տեսուած և լըօղաց հաճոյ թուեսցէ. բաւէ է:

(1846ին զրուած)

ՊՍԿԵՐԻՉ ԿԱՐԱՊԵՏ

Մէնց առ այժմ քանի մը նմոյշներ կը  
հրատարակենք: Աւելի ձեռնհամներու կը  
թողունք, պրատել, գտնել և հրատարա-  
կել ուրիշ անտիպա զրութիւններ որոնց  
աղերս ունին արեւմտահայ աշխարհաբարի  
ուսումասիրութեան հետ: Այսպէսով է որ  
կարելի պիտի ըլլայ գրել աղազային մա-  
նաւանդ մեր «Պօլսէվար» աշխարհաբարի  
լիակատար մէկ պատմութիւնը:

Գ. ՀՆԱՍԻՔ

1. Խազէ: Խազա. զազա = արկած, — 2. Կաչար =  
յակամայս, — 3. տամար = երակ, — 4. իզատ,  
իզէթ = պատիւ, — 5. Սուփա = Կախատնեակ, —  
6. Թուփան = ըլէնեղի, — 7. Թաւան = ձեղուն, —  
8. Հասան = սանդ, — 9. շամառ = պատակ, — 10.  
պօնիկ = Տիկ հովուական, — 11. ոճն, (էօճ) = ոճ, —  
12. շաշխուն, շաշզն = ապուշ, — 13. Թունա-  
կանկ, — 14. թիմարհանէ = յիմարանց, — 15.  
խայմէ եղայ = սահեցայ, հարսութիւնս կորսնցուցի, —  
16. թէքէր մէքէր = թաւալզոր, — 17. ազլ ըլ-  
լար = պաշտօնանկ ըլլար, — 18. Աղայ Պօղոս =  
մեծահարուսա Ամբարյաց որ ամրող հարսութիւնս կոր-  
սնցուցի, — 19. մաղտուր = անիրաւուած, — 20. ճահա-  
րէ լանա: — 21. ույզունսուզ = անյարմար, —  
22. ճղզզ կամ ճըլըզ = պզակ, բարակ, — 23.  
խամամիսուըշիս = խասնիխուն, — 24. ըէյֆիդ կէօ-  
րէ = հոս՝ բմահաճոյրի համեմատ, — 25. մասլա-  
հաթնուս իխթիզան (իխթիզան) = զորձերնուս պահանջ-  
ըւ, — 26. միւսահատէ (միւսահատէ) = չ'ունի՝ միչոց  
չ' ապր, — 27. մէրվէթ ըրէզ = բարեացակամութիւնն  
ոյց տուէր: